ՈՐՈՇՈՒՄ N 44

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

26-ը սեպտեմբերի 2001թ., ք. Երևան

Բանկային ավանդի վերաբերյալ օրենսդրության կիրառման
դատական պրակտիկայի մասին

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 49 գլխով (Բանկային ավանդ) նախատեսված բանկային ավանդի, մասնավորապես ավանդի գումարի տոկոսներ հավելագրելու և դրանք վճարելու կարգի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 906-907 հոդվածների պահանջները դատարաններում ճիշտ կիրառելու և միասնական դատական պրակտիկա իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների Խորհուրդը պարզաբանում է.

Բանկային ավանդի և դրա գումարին տոկոսներ հավելագրելու ու վճարելու կարգի վերաբերյալ գործեր քննելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 4 և 13 հոդվածների համաձայն բանկային ավանդի վերաբերյալ օրենսգրքի 906 և 907 հոդվածների պահանջները կիրառվում են 1999թ. հունվարի 1-ից հետո ներդրված բանկային ավանդների նկատմամբ:

Մինչև 1999թ. հունվարի 1-ը ներդրված բանկային ավանդների նկատմամբ կիրառվում են 1965թ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 398 հոդվածի պահանջները, այսինքն՝ ավանդների գումարին տոկոսներ հավելագրելու ու վճարելու կարգը սահմանվում է վարկային հիմնարկների կանոնադրություններով, ինչպես նաև տվյալ ժամանակաշրջանում գործող այլ իրավական ակտերով:

Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
Խորհրդի նախագահ Հ.ԴԱՆԻԵԼՅԱՆ